

Գուրգեն ԳԵՎՈՐԳՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ՈՒԱՅԼԴԻ ԼԵԶՎԱՈՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԳԱՂԱՓԱՐԱԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Հորվածում քննության են առնվում ռճական այն միջոցները, որոնք առավել հաճախակի են օգտագործվում հեղինակի կողմից: Դրանք են՝ համեմատությունը, մակդիրը, փոխաբերությունը և այլն: Ուսումնասիրության նյութը վերցված է Օսկար Ուայլդի ստեղծագործության գլոխգործոց համարվող «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպից և որոշ հեքիաթներից: Հատուկ ուշադրություն է դարձվում այս ռճական միջոցների հայերեն թարգմանությանը, քանի որ թարգմանության միջոցով են բացահայտվում անզլերենին և հայերենին հատուկ նմանություններն ու տարբերությունները:

Քանալի բառեր. Օսկար Ուայլդ, Դորիան Գրեյի դիմանկարը, ռճական միջոցներ, համեմատություն, մակդիր, փոխաբերություն, փոխանունություն, պարապրա

Խոսքի՝ որպես ներքին հզոր էներգիայով և գեղեցկությամբ օժտված երևույթի ընկալումը մեծապես ելնում է Օ. Ուայլդի գեղագիտական բանաձևումներից, որոնցում շեշտադրվում է առանցքային այն միտքը, որ արվեստագետը կոչված է ստեղծելու Գեղեցիկը: Իհարկե, գեղարվեստական լեզվի մասին նման ըմբռնումները հաստատում են, որ լեզուն իր մոգականությամբ կարող է վերակերտել, պայծառակերպել մարդուն:

Հատկապես ուշագրավ է ուայլդյան այն մեծ ձևակերպումը, ըստ որի՝ միտքը և խոսքը (բնականաբար և լեզուն) դիտվում են ոչ իբրև մարդու հոգևոր մաքրագործմանը և ապաքինմանը ուղղված բարոյական միջոցներ, այլ սոսկ արվեստի միջոցներ. ընդ որում Ուայլդն **արվեստ** բառը գրում է մեծատառ՝ շեշտադրելով նրա գերակա բնույթը՝ ազատ բարոյական բնույթի բոլոր կաշկանդումներից: Հեղինակի հենց այս դիրքորոշումն, որ ձևավորել է նրա լեզվամտածողությունը, որն էլ իր հերթին դրսևորվել է ուայլդյան պարապրաքսներով, հանրահայտ բարոյախոսական ասույթների հակասասույթներով, երբեմն աստվածաշնչյան ասույթների այլաշրջումով, ինչպես նաև անսպասելի, հանկարծագրուտ զուգորդումներով, ինքնօրինակ փոխաբերությունների, համեմատությունների և մակդրավորումների անկասելի հոսքով և այլն: Այդ ամենը ստեղծում են տպավորություն, որ հեղինակի համար խոսքը, գեղարվեստական տեքստը կամ լեզուն ունեն ինքնաբավ նշանակություն և ամեն ինչից անկախ գեղեցկություն: Պատահական չէ, որ հետևաբար, որոշ հետազոտողների համոզմամբ ուայլդյան գեղագիտությունը խարսխված է բացառիկության, եզակիության կամ անկրկնելիության և ազատության գաղափարների վրա: Ըստ «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպի հերոսներից մեկի՝ Հարիի, հաճույքը ոչ թե պարսավելի է, այլ՝ փառաբանելի:

“It belongs to nature, not to me. Pleasure is nature’s test, her sign of approval. When we are happy we are always good, but when we are good, we are not always happy.” (“The picture of Dorian Gray”, p. 92)

«Նրա հաճույքի արարիչը բնությունն է, ոչ թե ես: Հաճույքը բնության այն փորձաքարն է, որով նա ստուգում է մարդուն, հաճույքը բնության փառաբանման նշանն է: Երբ մարդ երջանիկ է, մարդ միշտ լավն է: Բայց միշտ չէ, որ լավ մարդիկ երջանիկ են լինում»: («Դորիան Գրեյի դիմանկարը», էջ 99)

Այս դրույթի համեմատությամբ կարելի է ասել, որ ուայդյան հակա-ավանդույթային, երբեմն նույնիսկ հակաբարոյական թվացող ազատության ու բացառիկության հաղթարշավը հենց այդ նույն տաղտկալի դարձած ավանդույթի և «բարոյագրկված բարոյականության» համար դառնում է այն գարնանային խթանիչ քամին, ազդակը կամ փորձաքարը, որով ամրանում է առաքինությունը և ձեռք բերում կենսական նոր, թարմ լիցքեր: Ուստի, գնահատելով Ուայդի ստեղծագործությունն իբրև միաբևեռ՝ արքետիպերին հակադրված կամ ոչ ավետարանական, թվում է ոչ այնքան համոզիչ: Բայց որ նրա լեզվին բնորոշ բառապաշարը, ոճական և արտահայտչական միջոցները իր հոգեկերտվածքի, աշխարհընկալման և գաղափարագեղագիտական համոզմունքների հարազատ արտացոլումն են նրա ստեղծագործությունների լեզվաոճական մակարդակում, ակնհայտ է: Այսպես՝

“He was very much admired indeed. He is as beautiful as a weathercock, remarked one of the town councilors who wished to gain a reputation for having artistic tastes...” (“The Happy Prince”, p.13)

«Հիրավի ամենքն էլ հիանում էին նրանով: Նա հողմացույց արադաղի պես գեղեցիկ է, - ասաց Քաղաքային խորհրդականներից մեկը՝ կամենալով արվեստ հասկացողի համբավ վայելել...»: («Երջանիկ արքայազնը», էջ 9)

Այս օրինակում երջանիկ արքայազնի արձանը համեմատելով հողմացույց արադաղի հետ՝ հեղինակը մեղմ երգիծանքով արժևորում է քաղաքային խորհրդականներից մեկի՝ արձանին տված գնահատականը՝ դրանով իսկ ներկայացնելով արվեստից ոչինչ չհասկացող խորհրդականի արվեստասեր ու ճաշակով երևալու ձգտումը:

Համեմատությունն իհարկե փոխանվանական է /Гаспарян, 2000/, քանի որ դրա հիմքում դրված է համեմատվող առարկաների (the statue of the Happy Prince) և (weathercock) ֆիզիկական ինչ-ինչ հատկանիշների նմանությունը (իհարկե խորհրդականի ընկալմամբ):

Կարելի է նկատել, որ տվյալ համեմատական բանադարձման և դրա ընդլայնված հորիզոնական համատեքստի համապատասխան ընկալման և հասկացման համար անհրաժեշտ է, որ ընթերցողը որոշակի պատկերացում ունենա հողմացույց արադաղի մասին: Այլ կերպ, հատվածի ընկալումը որոշակիորեն կապված է ընթերցողի հենքային գիտելիքներից:

Հետաքրքրական է, որ թեև համեմատության մեջ կիրառվող weathercock միավորը լեզվի մակարդակում բացի իր ուղղակի անվանողական իմաստից օժտված է նաև *անկայուն մարդ* փոխաբերական իմաստով /The Concise

Oxford Dictionary, 1976: 1320/, այս գեղարվեստական համատեքստում երևում է հենց անվանողական իմաստը (revolving pointer often in shape of cock mounted in a high place to show whence the wind blows): Այն ըստ էության տեխնիկական եզրույթ է, սակայն իր կազմում ունենալով cock – արաղաղ բաղադրիչը հատվածի համատեքստում ձեռք է բերում որոշակի դրական առնչանակային երանգներ՝ մասնավորապես մտազուգորդելով արաղաղի արքետիպային կերպարի հետ, որը հատկապես ժողովրդական հայտնի հեքիաթներում հայտնի է որպես լույս ավետող:

Համեմատության արժևորումը հեքիաթի լայն հորիզոնական համատեքստում լսելի է դարձնում հեղինակի ձայնը՝ նրա՝ մի կողմից բարի, սրտացավ, այլոց հոգսերով տառապող երջանիկ արքայազնին, մյուս կողմից՝ բանիմաց երևալու ցանկությամբ իրեն ցուցադրող քաղաքային խորհրդականին տրվող գնահատականները:

Թարգմանության տարբերակների /Հախվերդյան, 1980; Առաքելյան, 2011/ ուսումնասիրությունը թույլ է տվել ընդունելի համարել Ռ. Առաքելյանի թարգմանությունը, որտեղ weathercock միավորի *հողմացույց* արաղաղ համարժեքը գրաֆիկական ձևակերպման առումով հավասարազոր է բնագիր տարբերակին:

“Death is great price to pay for a red rose,” cried the nightingale, “and life is pleasant to sit in the green wood, and to watch the sun in his chariot of gold, and the moon is her chariot of pearl. Sweet is the scent of the hawthorn, and sweet are the bluebells that hide in the valley, and the heather that blows on the hill. Yet love is better than life and what is the heart of a bird compared to the heart of a man?” (“The Nightingale and the Rose”, p. 22-23)

«Մահը շատ բարձր գին է կարմիր վարդի համար,- գոչեց Սոխակը,- և Կյանքը շատ թանկ բան է բոլորի համար: Հաճելի է նստել կանաչ անտառում և դիտել Արևը՝ իր ոսկե կառքում, Լուսինը՝ մարգարտե կառքում: Քաղցր է սզնու բուրմունքը, և անուշ են զանգակա-ծաղիկները, որոնք թաքնվում են հովտում, և հավամրգին, որ ծաղկում է բլրի վրա: Սակայն սերն ավելի՛ն է քան կյանքը, և ի՞նչ է թռչնի սիրտը մարդու սրտի համեմատ»: («Սոխակն ու Վարդը», էջ 22)

Ընդգծվածները փոխաբերություններ են, ընդ որում՝ համարժեք բնագրին: Նշյալ փոխաբերություններում առկա են որոշ կայուն, ավանդական, շրջանառու լեզվական միավորներ (դրանք են՝ “life is pleasant”- «կյանքը հաճելի է», “sweet is the scent”- «քաղցր է բուրմունքը», “sweet are bluebells”- «անուշ են... ծաղիկները»), որոնք թե՛ անզլերենում, թե՛ հայերենում ունեն այլաբանական նշանակություններ: Նշված միավորները, որոնք գլխավորապես ներհատուկ առնչանակային երանգավորումներով են օժտված՝ ընդ որում դրական, անկասկած, որոշակի հուզականություն են հաղորդում սիրո փառաբանությանը նվիրված հեքիաթի տվյալ համատեքստին: Առկա են այնպիսի եզակի

փոխաբերական բառակապակցություններ (*“the sun in his chariot of gold and the moon in her chariot of pearl”*), որոնք առանձնակի վեհություն են հաղորդում ներկայացվող բնապատկերին:

Փոխաբերական-դարձվածային կիրառությունները հաճախադեպ են ուայլդյան լեզվամտածողության պարագայում: Ահա «ծանր» մակդիրով կազմված, այսինքն՝ բառի փոխաբերական իմաստով կիրառված մի արտահայտություն.

“It was certainly a hard day”, said little Hans to himself as he was going to bed... (“The Devoted Friend”, p. 34)

«Ի՜նչ ծանր օր էր, սասց փոքրիկ Հանսն ինքն իրեն՝ անկողին մտնելիս...» («Նվիրված Բարեկամը», էջ 41)

Պետք է ասել, որ *hard* (ծանր կամ դժվարին) բառի այլաբանական իմաստավորմամբ կազմված դարձվածքները շատ են թե՛ անգլերենում և թե՛ հայերենում, այն տարբերությամբ, որ հայերենում *ծանր* մակդիրով կազմված կազմախոսական դարձվածքները շատ են («ծանր ականջ» կամ մի բառով՝ *ծանրականջ, ծանրագլուխ* և այլն), մինչդեռ անգլերենում՝ համեմատաբար քիչ: Դրան հակառակ անգլերենում շատ են «ծանր» միավորով կազմվող ոչ սոմատիկ դարձվածքները:

Ուայլդյան հերոսների խոսքը աչքի է ընկնում բարոյախրատական երանգավորում ունեցող տարբեր արտահայտություններով, որոնցից, ըստ էության, խթանում է գրողի վերաբերմունքը մարդկային իմաստնության նկատմամբ: Այդ վերաբերմունքը երբեմն մեղմ երգիծական է, երբեմն՝ նաև խիստ: Հատկապես երկխոսություններում հաճախացող արտահայտությունները կարծես վկայությունն են այն բանի, որ կարևոր է ոչ այնքան բուն իմաստնությունը, որքան դրա նմանակումը, ոչ այնքան իրականը, որքան թվացյալը, ոչ այնքան էականը, որքան ցուցադրականը: Այս առումով ուշագրավ է բարոյախոսության համար գղջացող Կանեփահավի մտորումը.

“I am rather afraid that I have annoyed him”, answered the Innet. “The fact is that I told him a story with a moral.” (“The Devoted Friend”, p. 16)

«Երևի նեղացրի նրան,- պատասխանեց Կանեփահավը,- պատճառն այն է, որ ես նրան բարոյախոսական պատմություն պատմեցի»: («Նվիրված Բարեկամը», էջ 48)

Գործող անձի խոսքում դրսևորվում է հեղինակի աշխարհայացքը՝ ամենայն բարոյախրատականի նկատմամբ մերժողական վերաբերմունքը և դա հատկապես խթանում է ասույթի *I am rather afraid that I have annoyed him* հատվածում, որն, ըստ էության, կիրառվում է հակադարձ իմաստով, այսինքն արտահայտում է ոչ թե որևէ իմաստնություն, այլ պարզապես իմաստնության խաթ:

“It is not to Egypt that I am going”, said the Swallow. “I am going to the House of Death. Death is the brother of sleep, is he not?” (“The Happy Prince”, p. 18)

«Ես թռչում եմ ոչ թե դեպի Եզիպտոս,- ասաց Ճիծեռնակը,- այլ Մահվան Օթևանը: Մահն ու Լուսնը եղբայրներ են, այնպես չէ»: («Երջանիկ Աքադադը», էջ 96)

Լեզվաճանաչման միջոցների իմաստային ու վերնշանային մակարդակների վերհանման առումով հարուստ նյութ են տալիս ոչ միայն Ուայլդի հեքիաթները, այլև, հատկապես, «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպը, որին բնորոշ պատկերավորման ու լեզվաարտահայտչական միջոցների ներքին ու արտաքին ազդակները հասկանալու և համակողմանիորեն բնութագրելու և հատկապես թարգմանական համարժեքությունն արժևորելու առումով շատ կարևոր է հաշվի առնել լեզվաճանաչման ու լեզվարտահայտչական տարբեր միջոցների մեջ ամփոփված բարոյագեղագիտական ու արքետիպային տեղեկատվությունը:

«Դորիան Գրեյի դիմանկարը» վեպում առանձնակի ուշադրության են արժանի ուայլդյան պարադոքսները. լեզվաարտահայտչական մի միջոց, որը կենտրոնական տեղ է գրավում Ուայլդի ողջ ստեղծագործության մեջ և բնութագրական է նրա լեզվամտածողության համար: Իհարկե, պարադոքսալ արտահայտությունների մասն առատությունը մի կողմից բնութագրում է Ուայլդի լեզվամտածողության եզակիությունը կամ բացառիկությունը, մյուս կողմից ցույց է տալիս Ուայլդ-մտածողի ու գեղագետի դիրքորոշումն ու պահվածքը գործող կամ ավանդական գաղափարագեղագիտական ու բարոյական կարծրատիպերի նկատմամբ:

Ուստի, հասկանալ կամ բնութագրել Ուայլդի լեզվաարտահայտչական միջոցները, մասնավորապես՝ նրա լեզվամտածողության հույժ բնորոշ պարադոքսալ բնույթի ձևակերպումները, նշանակում է նախ և առաջ հասկանալ ուայլդյան գեղագիտության էությունը և ուղղվածությունը: Առանց Ուայլդ-գեղագետի տեսական հայացքների ճանաչման և բնութագրման՝ անհնարին է դրանց գեղարվեստական-լեզվաարտահայտչական մարմնավորումների վերհանումն ու բնութագրումը:

Այս հանգամանքը լավ է նկատել հենց ինքը՝ Օ. Ուայլդը, վեպի սկզբում հարկ համարելով տալ իր գաղափարագեղագիտական հավատամքի հիմնական և հիմնարար ելակետերը. *The artist is the creator of beautiful things. (Արվեստագետը նա է, ով ստեղծում է Գեղեցիկը), The moral life of man forms part of the subject-matter of the artist- (Արվեստագետի համար մարդու բարոյական կյանքը նրա ստեղծագործության թեմաներից սուկ մեկն է), Thought and language are to the artist instruments of an art- (Միտքը և խոսքը արվեստագետի համար Արվեստի միջոցներ են), Vice and virtue are to the artist materials for an art-(Արատն ու առաքինությունը նյութ են ծառայում նրա ստեղծագործության համար), Diversity of opinion about a work of an art shows that work is new, complex and vital- (Եթե արվեստի ստեղծագործությունը վեճեր է առաջացնում, ուրեմն՝ նրա մեջ նոր, բարդ և նշանակալից մի բան կա), We can forget a man for making a useful thing as long as he does not admire it. The only excuse for making a useless thing that one admires it intensely. (Կարելի է ներել այն մարդուն, որն ինչ-որ օգտակար բան է անում, միայն եթե նա չի հիանում*

դրանով: Իսկ այն մարդու համար, ով անօգուտ բաներ է ստեղծում, միակ արդարացումը լոկ կրքոտ սերն է իր ստեղծագործության նկատմամբ) և այլն:

Ամենառաջին ու գլխավոր հատկանիշը Ուայլդի ողջ ստեղծագործության և, մասնավորապես, «Գորիան Գրեյի» համար, խոսքի, լեզվի ըմբռնումն է, այն հայեցակերպը, որ խոսքը կամ լեզուն գերակա են ամեն ինչի նկատմամբ, քանի որ ամեն մի զգացում կամ միտք կայանում է միմիայն խոսքի մեջ, ուստի լեզուն է հասարակության էության ու ինքնության բուն արտահայտիչը: Իհարկե, Ուայլդն այստեղ ի նկատի ունի գեղեցիկ, ոճավոր ու իմաստալից գեղարվեստական խոսք: Եվ ուայլդյան այն ասույթը, թե «... կյանքի իմաստն արվեստն է», վերաբերում է առաջին հերթին իր՝ գրողի խոսքարվեստին: Եվ Ուայլդն իբրև «գեղագիտական շարժման» ամենացայտուն ներկայացուցիչ, գեղեցկության (գեղեցիկ խոսքի, արտահայտության) մեջ է տեսել ամեն ինչի իմաստն ու լրումը, նույնիսկ՝ մարդու փրկությունը: Այսպես՝

The only way to get rid of temptation is to yield to it. ("The Picture of Dorian Gray", p. 99)

Գայթակղությունից ազատվելու միակ միջոցը նրան տրվելն է: («Գորիան Գրեյի դիմանկարը», էջ 28)

The body sins once, and has done with its sin. for action is a made of purification. ("The Picture of Dorian Gray", p. 99)

Մեղանչելով մարդը ազատվում է դեպի մեղքը տանող անհաղթահարելի ձգտումից, որովհետև մեղքի կատարումը մաքրման միջոց է: («Գորիան Գրեյի դիմանկարը», էջ 28)

Sin is the only real color – element left in modern life. ("The Picture of Dorian Gray", p. 112)

Մեր կյանքում ոչինչ չի մնացել գեղեցիկ, բացի արատից: («Գորիան Գրեյի դիմանկարը», էջ 40)

Philanthropic people lose all sense of humanity. ("The Picture of Dorian Gray", p. 119)

...Բարեգործները կորցնում են մարդասիրական բոլոր զգացումները: («Գորիան Գրեյի դիմանկարը», էջ 47)

Պարադոքսալ արտահայտությունների բերված շարքը հիրավի ցույց է տալիս գորշ իրականության դեմ ելած գրողի հոգեկան խռովքն ու այդ իրականությանը հակադարձելու ձգտումը: Ուայլդի լեզվաոճական ինքնատիպությունը պայմանավորված է ազգային, ծագումնաբանական կամ ժառանգական գործոնով: Բոլոր արտահայտություններում էլ առկա է հակաօրինականություն (get rid of temptation-yield to it, sin-purification, sin-color-element, philanthropic, people-lose all sense of humanity), որը միտված է մարմնավորելու հեղինակի անհաշտվողականությունը հասարակական կյանքի արատների հետ:

Ուշագրավ են նաև «Գորիան Գրեյի դիմանկարը» վեպում հանդիպող մակդիրները, որոնք հաճախ սուր են, ընդգծված, ինչպիսին որ գործող անձանց հոգեվիճակն է. առանց հաշվի առնելու այդ հոգեվիճակները՝ հնարավոր չէ հասկանալ

ուայլոյան մակդիրների իմաստային նրբերանգները, ուղղվածությունը և համատեքստային նշանակությունը, քանի որ յուրաքանչյուր մակդրավորում հնարավոր է հասկանալ միայն իր իմաստային ֆոնի ու համատեքստային կիրառության մեջ: Այս առումով ուայլոյան մակդրավորումները վերը նշված գաղափարագիտական հայացքների և գրողի կերպարային հիպոստասների դրսևորումներն են՝ լեզվաոճական հարթություններում: Բերենք մի քանի բնորոշ օրինակներ՝

There are not triumphs left for you, or have to content yourself with those mean triumphs... (“The Picture of Dorian Gray”, p. 104)

...Ձեզ համար այլևս հաղթանակներ չկան, կամ ստիպված բավարարվում եք խղճուկ հաղթանակներով: («Գորիան Գրեյի դիմանկարը», էջ 32)

Ընդգծված *mean* խղճուկ մակդիրը, որն աչքի է ընկնում ակնհայտ բացասական ներհատուկ առնչանակությամբ, այլաբանական իմաստ ունի և լավագույնս բնորոշում է լորդ Հենրիի հոգեվիճակը, նրա ժխտողական, որոշ չափով ցինիկ վերաբերմունքը մարդկային հաղթանակների նկատմամբ: *Mean* ածականի արտասովոր զուգակցումը *triumph* միավորի հետ նպատակաուղղված է ներշնչելու խոսակցին (տվյալ դեպքում՝ Գորիան Գրեյին), որ վերջինիս ձեռքբերումները կյանքում որևէ արժեք չունեն և տրամադրելու նրան հրաժարվելու բարոյականության իր սկզբունքներից:

Every month as it wanes brings you nearer to something dreadful. (“The Picture of Dorian Gray”, p.104)

Յուրաքանչյուր անցնող ամիս մոտեցնում է ձեզ այդ *սհավոր* գալիքին: («Գորիան Գրեյի դիմանկարը», էջ 32)

Կիրառված գալիքի նկատմամբ *սհավոր* ածականն ունի այլաբանական նշանակություն և արտահայտում է ժխտողական, կտրուկ, անկումային հոգեվիճակ, ինչը բնորոշ է ուայլոյան հոգեկերտվածքի հարազատ արտահայտիչներից մեկին՝ լորդ Հենրիին, ով, ըստ էության, աստվածաշնչյան գայթակղիչ օձի (բանասարկուի, սատանայի) գրական անդրադարձն է:

He had retired from the Diplomatic Service in a capricious moment of annoyance... (“The Picture of Dorian Gray”, p. 115)

Քմսհաճ թուպեի ազդեցությամբ նա հեռացել էր դիվանագիտական ծառայությունից: («Գորիան Գրեյի դիմանկարը», էջ 42)

Այս արտահայտությունում առկա է *քմսհաճ* մակդիրը՝ անսպասելիորեն կիրառված *թուպեի* նկատմամբ: Պարզ է, որ *քմսհաճ* ածականը, որոշակի պատկերավորություն է ներմուծում տեքստ՝ անսպասելիորեն զուգակցվելով թուպե միավորի հետ, որում բացասական առնչանակային երանգները ակնհայտ են, դրանով իսկ հատկանշելով ուայլոյան անհատական ոճը:

Նույնը կարելի է ասել նաև հաջորդ օրինակում առկա «խելախել հետաքրքրություն» կապակցության մասին: Գորիան Գրեյը Հարրիին ասում է.

I used to look at everyone who passed me, and wonder, with a mad curiosity, what sort of lives they led. ("The Picture of Dorian Gray," p. 135)

Ես սովորություն ունեի նայել ամենքին, ով անցնում էր կողքովս և խելահեղ հետաքրքրությամբ ուզում էի իմանալ, թե ինչպիսի կյանք է վարում յուրաքանչյուրը: («Գորիան Գրեյի դիմանկարը», էջ 63)

Նույն խելահեղ բառը՝ մակբայական կիրառությամբ առկա է հետևյալ արտահայտության մեջ:

He felt a wild longing for the unstained purity of his boyhood. ("The Picture of Dorian Gray", p. 341)

Նա խելահեղորեն զգաց իր պատանեկության անաղարտ մաքրության կարոտը: («Գորիան Գրեյի դիմանկարը», էջ 263)

Խելահեղորեն զգալը այնպիսի արտահայտություն է, որը բնորոշ է ոչ միայն գործող անձի (Գորիանի), այլև իր՝ հեղինակի աշխարհընկալմանը՝ կառուցված անսովոր զուգորդումների հիման վրա: Այս առումով հետաքրքիր է նաև unstained purity- անաղարտ մաքրություն կապակցությունը: Ասվածը հիմնավորվում է նաև հետևյալ օրինակով:

He knew that he had tarnished himself, filled his mind with corruption, and given horror to his fancy; that he had been an evil influence to others, and had experienced a terrible joy in being so. ("The Picture of Dorian Gray", p. 341)

Գորիանը գիտեր, որ ինքը ապականվել է, կեղծել է հոգին, նա անընդհատ ներշնչում էր իրեն, որ իր ազդեցությունը կործանարար է եղել ուրիշների վրա, և դա **ահավոր հաճույք** էր պատճառում իրեն: («Գորիան Գրեյի դիմանկարը», էջ 263)

Այստեղ գործածված **a terrible joy - ահավոր հաճույք** մակդրային բառակապակցությունը, որը հիմնված է նրբաբանության վրա և չափազանց բնորոշ է Գորիանին: Այն հեղինակի գաղափարային դիրքորոշման մարմնավորումներից կամ հիպոստասներից է: Կործանարար ածականը, որն աչքի է ընկնում բացասական երանգների թանձրությամբ հատկապես այս համատեքստում, որը աստիճանաբար զարգացնելով վեպի սյուժեն տանում է դեպի Գորիանի նաև՝ ֆիզիկական կործանումը, վեպում ձեռք է բերում, առանցքային կարևորություն և ըստ էության դառնում կերպարի բնութագրման կարևորագույն լեզվական միջոցներից մեկը:

Վերը բերված օրինակների շարքը հավաստում է, որ յուրաքանչյուր լեզվաճանաչման միջոց հարկ է դիտարկել գրողին հատուկ պոետիկայի և գաղափարագեղագիտական կողմնորոշումների, ինչպես նաև ստեղծագործության ողջ համատեքստի դիտանկյունից:

Միայն այս ընդհանուր պատկերը նկատի ունենալով հնարավոր է ճանաչել ու բնութագրել լեզվական առանձին միավորների հուզարտահայտչական և իմաստային հագեցվածությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գաապարյան Ս. Ք., Մուրադյան Գ. Հ., Գաապարյան Ն. Հ. Գործառնական ոճագիտություն (անգլերենի գործառնական արդիական հարցեր), Եր., ԵՊՀ հրատ., 2011:
2. Համբարձումյան Գ.Հ. Գեղարվեստական ստեղծագործությունը և նրա քարգմանությունը որպես բանասիրական համալիր քննության առարկա, Եր., 2007:
3. Միրայելյան Ա. Գեղեցիկի ընկալումը Օսկար Ուայլդի «Գորիան Գրեյի դիմանկարը» վեպում, Եր., Համաստեքստ, 2009:
4. Ахманова О.С., Гюббенет И.В. «Вертикальный контекст» как филологическая проблема // *Вопросы языкознания*, 1977, № 3.
5. Гаспарян С.К. Фигура сравнения в функциональном освещении. Ереван: Изд. Ереванского гос. университета, 2000.
6. Гюббенет И.В. Основы филологической интерпретации литературно-художественного текста. М.: МГУ 1991.
7. Задорнова В.Я. Восприятие и интерпретация художественного текста. М: Высшая школа, 1984.
8. Литвин Ф.А. Многозначность слова в языке и речи. М.: Комкнига, 2005.

Գ. ГЕВОРԳՅԱՆ – *Идейно-эстетическая значимость некоторых лингвостилистических приемов в произведениях Оскара Уайльда.* – В статье рассматриваются наиболее часто употребляемые стилистические средства, а именно сравнение, эпитет, метафора, метонимия, парадоксы. Материалом для анализа послужили некоторые из сказок Оскара Уайльда, а также роман «Портрет Дориана Грея». Особое внимание уделяется переводу вышеуказанных средств на армянский язык, так как именно перевод дает возможность выявить нюансы и оттенки стилистических средств.

Ключевые слова: Оскар Уайльд, «Портрет Дориана Грея», стилистические приемы, сравнение, эпитет, метафора, метонимия, парадокс

G. GEVORGYAN – *Ideological-Aesthetic Value of Some Linguostylistic Devices in the Works by Oscar Wilde.* – The paper deals with the most frequently used stylistic devices by O. Wilde, namely simile, epithets, metaphor, metonymy, paradoxes. Some of his tales and the novel “The Picture of Dorian Gray” have been analyzed. Special attention is paid to the translation of these devices into Armenian, because translation reveals all the nuances and emotional colourings hidden in them.

Key words: Oscar Wilde, “The Picture of Dorian Gray”, simile, epithet, metaphor, metonymy, paradox